ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2023 թվականի կարիքների կարիքների համար տոներային քարտրիջների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 28.10.2022թ. N 539/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 18.11.2022թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Տ.Պետրոսյանը, գնահատող հանձնաժողովի անդամ Շ.Առաքելյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ Հ.Վանյանը:

1. Հայտերի ուսումնասիրության արդյունքների մասին

-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/4 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերը արձանագրեց՝

1. Յուրաքանչյուր չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած «Ստարտկոպի» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի և «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

2" «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ սակայն Հավելված N 1-ում՝ Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում մասնակիցը սխալ է նշել գնման ընթացակարգի ծածկագիրը, ինչպես նաև սխալ է նշել մասնակցության համար գնային առաջարկ ներկայացրած չափաբաժինները:

3. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/4 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

-Նիստը վերսկսել՝ 2022 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Տ.Պետրոսյան

Անդամներ՝ Շ.Առաքելյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան